Back to Armenia
Տուն դարձ

Կամավոր վերադարձի կամ Հայրենիքից հեռանալու մասին որոշում կայացնելը հեշտ չէ: Մեր նպատակը Ձեզ օգնելն է՝ լինելու ավելի տեղեկացված:

Այժմ Հայաստան վերադառնալու կամ Հայաստանից մեկնելու հարցերում Դուք ունեք հուսալի խորհրդատու:

Հարգելի՛ Հայրենակից,

Ձեր բացակայության ընթացքում Հայաստանը լուրջ փոփոխություններ է հաղթահարել: Երկրում տեղի են ունեցել ակնառու փոփոխություններ: Հայրենիքը դարձել է գրավիչ և կանչում է արտերկրում բնակվող իր քաղաքացիներին: Վերջին տարիներին նկատելիորեն աճել է արտերկրից Հայաստան վերադարձողների թիվը:

Հիշեք, միջազգային իրավունքի տեսանկյունից յուրաքանչյուր օտարերկրյա պետություն կարող է արգելել Ձեր մուտքն ու բնակությունն իր սահմաններում: Սակայն հայրենի երկիր վերադառնալու Ձեր իրավունքն անօտարելի՛ է:

Մաղթու՛մ ենք բարի վերադարձ:

Շնորհակալությո՛ւն մեզ վստահելու համար:

Իրականացնող կազմակերպությունները՝

BRITISH COUNCIL
ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ
www.britishcouncil.am

ՀՀ ՏԿՆ միգրացիոն գործակալություն
Migration Agency of the MTA RA
www.dmr.am

ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development
www.ichd.org

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից

This project is financed by the European Union

Թանկագի՛ն հայրենակից,

- եթե տարիներ առաջ սոցիալական վիճակը դրդել է Ձեզ հեռանալ Հայաստանից, իսկ այսօր ինչ-ինչ պատճառներով ստիպված եք լքել Ձեզ հյուրընկալած երկիրը,
- եթե մտածում եք հայրենիք վերադառնալու մասին, բայց դեռևս տատանվում եք,
- եթե Հայաստան վերադառնալու և հայրենիքում հաստատվելու հարցերով տեղեկությունների կարիք ունեք,
- եթե Հայաստանում եք և մտածում եք օտար ափերում բախտ որոնելու մասին,

ապա այցելե՛ք մեր ինտերնետային կայքը ներքոհիշյալ հասցեներով և գտե՛ք օգտակար տեղեկություններ Հայաստան վերադարձի և հայրենիքում վերահաստատման գործընթացն ավելի արագ կազմակերպելու մասին:

www.backtoarmenia.com
www.backtoarmenia.am
www.tundardz.am
www.sma.am/migrant

www.BackToArmenia.com
www.Tundardz.am
www.BackToArmenia.am
www.sma.am/migrant

ՏՈՒՆ ԴԱՐՁ

...ՈՐ ՁԵԶ ՄԻՇՏ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

Back to Armenia
Տուն դարձ

ԹԵԺ ԳԻԾ՝
+374 10 224925
+374 10 264163

ՍԿԻԶԲ - ՏՈՒՆԴԱՐՁ

http://www.backtoarmenia.com/

Հարգելի հայրենակից,

Այցելելով ինտերնետային կայքի առանձին բաժիններ՝ դուք կարող եք համապարփակ տեղեկատվություն ստանալ.

- ՀՀ քաղաքացության և զինապարտության,
- առողջապահության և կրթության,
- կենսաթոշակային և պետական նպաստների համակարգերում տեղի ունեցած փոփոխությունների և հնարավորությունների մասին:

«Նորություններ» բաժնում կարող եք ծանոթանալ Հայաստանում միգրացիայի հիմնախնդիրներին նվիրված զարգացումներին:

«Նյութեր» բաժնում Դուք կարող եք՝

- դիտել հատվածներ միգրացիայի խնդիրները լուսաբանող ֆիլմաշարից.
- հետևել միգրացիոն թեմաներով հեռուստահաղորդումներին ու բանավեճերին.
- ծանոթանալ միգրացիոն հիմնախնդիրներին նվիրված մամուլի հրապարակումներին:

«Գործակալություն» բաժնից կարող եք տեղափոխվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պաշտոնական կայք և ծանոթանալ գործակալության աշխատանքներին ու ծրագրերին:

«Վեբ տոմս» գործիքը Ձեզ կընձեռի ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության հետ ուղիղ նամակագրական կապ ստեղծելու հնարավորություն: Դուք կարող եք Ձեր դիմումը կամ խնդիրը գրավոր ներկայացնել պետական լիազոր մարմնին և ստանալ գրավոր պատասխան՝ առանց Հայաստան այցելելու:

Ի լրումն, Դուք հնարավորություն ունեք ուղիղ կապ հաստատել Հայաստանի պատկան մարմնի իրազեկ մասնագետի հետ և անհրաժեշտ խորհրդատվություն ստանալ համաժամանակյա ուղիղ կապի ռեժիմում:

Դուք կարող եք այցելել մեր ինտերնետային կայք ցանկացա՛ծ երկրից, ցանկացա՛ծ վայրից և համակարգչից, նույնիսկ ինտերնետսրճարաններից:

Կայքից օգտվելու համար Ձեզ անհրաժեշտ չեն լրացուցիչ ծրագրեր կամ հատուկ հմտություններ:

Եթե Ձեր համակարգչում չկան անհրաժեշտ տառատեսակներ կամ համապատասխան լեզվի ծրագրեր, ապա կայքում գրանցվելուց հետո կարող եք օգտվել էջում տեղադրված ստեղնաշարից և հաղորդակցվել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն:

Կայքը հնարավորություն է տալիս չբացահայտել Ձեր անունն ու Ձեր այլ անձնական տվյալները: Վեբ տոմս լրացնելիս, դիմում ներկայացնելիս, կամ խորհրդատուի հետ ուղիղ կապ հաստատելիս կարող եք հանդես գալ կեղծանվամբ և անհատական տվյալներ չտրամադրել:

Կայքը եռալեզու է (հայերեն, անգլերեն, ռուսերեն), դրա ընձեռած հնարավորություններին մանրամասն կարող եք ծանոթանալ **«Ուղեցույց»** բաժնում:

Իսկ եթե էլեկտրոնային կապի միջոցները տվյալ պահին հասանելի չեն, և Ձեզ անհրաժեշտ է ստանալ որևէ հարցի հրատապ պատասխան, ապա վերցրե՛ք հեռախոսափողն ու հավաքե՛ք մեր **«Թեժ գծի»** հեռախոսահամարները՝

+374 10 224925
+374 10 264163

Մեր խորհրդատուները պատրաստակամորեն կպատասխանեն Ձեր հարցերին և կտրամադրեն անհրաժեշտ օժանդակություն: